2025-2026 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
CONCOURS D'ENTREE 2025-2026

Հասարակագիտություն / Sciences sociales

(Իրավագիտության ֆակուլտետ / Faculté de Droit)

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է երկու միավոր:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր: Սխալ պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:		
1.	Վերաքննիչ բողոք բերելուց հետո ընդհանուր իրավասության դատարանի ակտերի օրինական ուժի մեջ մտնելը՝	ա/ արգելվում է բ/ անտեսվում է գ/ կասեցվում է դ/ չեղարկվում է
2.	Իրավունքի համակարգին բնորոշ է.	ա/ միասնությունը բ/ ինքնավստահությունը գ/ համաձայնեցվածությունը դ/ ճիշտ են ա և գ պատասխանները
3.	Ո՞վ է «Որոգայթ փառաց» փաստաթղթի հեղինակը.	ա/ Հովսեփ Էմինը բ/ Շահամիր Շահամիրյանը

		գ/Մովսես Բաղրամյանը դ/ Ժան-ժակ Ռուսոն
4.	Պետության կողմից որպես հասարակական հարաբերությունների կարգավորման միջոց ճանաչված սովորույթը կոչվում է.	ա/ իրավական բ/ սոցիալական գ/ իրավապահպան դ/ այլընտրանքային
5.	Ո՞րը օրենսդրական գործընթացի փուլ չէ.	ա/ օրենսդրական նախաձեռնության փուլ բ/ օրինագծի քննարկման և ընդունման փուլ գ/ ընդունված օրենքի մեկնաբանման փուլ դ/ ընդունված օրենքի ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
6.	Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը մարդու ազատության վերաբերյալ. «Մարդու ազատությունը ծնվում է միայն այն ժամանակ, երբ մարդն ունակ է դառնում հաղթահարելու իր բնական, կենդանական գոյությունը և ինքն իր համար ձևավորելու նոր անձ»:	ա/ Ի.Կանտ բ/ Գ. Հեգել գ/ Շ. Մոնտեսքիո դ/ Թ. Ջեֆերսոն
7.	5-րդ դարում Հայաստանը փոխառեց.	ա/ Լեհահայոց դատաստանագիրքը բ/ Ասորա-հռոմեական դատաստանագիրքը գ/ Աստրախանի հայերի դատաստանագիրքը դ/ Ճիշտ են ա և գ պատասխանները
8.	Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները ապահովում են դատավորների՝	ա/ անկողմնակալությունը բ/ անկախությունը գ/ անձեռնմխելիությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
9.	Փաստաբանական պալատը՝	ա/ անկախ կազմակերպություն է բ/ ինքնակառավարվող կազմակերպություն է գ/ ստորադասության մեթոդով կառուցված կազմակերպություն է դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
10.	Սահմանադրական դատարանը լուծում է՝	ա/ հանրաքվեների հետ կապված վեճերը բ/ ընտրողների ցուցակների հետ կապված վեճերը գ/ ՀՀ նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը դ/ ճիշտ են ա և գ պատախանները
11.	Անձին, ով կասկածվում է հանցանք կատարելու մեջ, մեղադրանք առաջադրելու իրավունք ունի՝	ա/ դատավորը բ/ դատախազը գ/ քննիչը դ/ հետաքննիչը

12.	Ո՞ր սկզբունքի համաձայն է ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված մեղադրող կողմի վրա.	ա/ մեղավորության կանխավարկածի համաձայն բ/ արդարացիության կանխավարկածի համաձայն գ/ անմեղության կանխավարկածի համաձայն դ/ իրավականության կանխավարկածի համաձայն
13.	Ինչպիսի՞ հայց կարող է հարուցել դատախազությունը.	ա/ պետական շահերի պաշտպանության բ/ քաղաքացիական շահերի պաշտպանության գ/ դատավարության մասնակիցների շահերի պաշտպանության դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
14.	Ի՞նչ կարող է ներկայացնել ոստիկանությունը հանրային մարմիններին և կազմակերպություններին.	ա/միջնորդագրեր և առաջարկություններ բ/ միջնորդագրեր և հրամանագրեր գ/ առաջարկություններ և հրամանագրեր դ/ առաջարկություններ և բողոքներ
15.	Ոստիկանությունը անձի իրավունքները սահմանափակում է՝	ա/ օրինական հիմքերով բ/ կամայական հիմքերով գ/ չունի այդպիսի իրավասություն դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
16.	Նշվածներից ո՞վ չի իրականացնում գործի քննության և լուծման գործառույթ.	ա/ դատարանը բ/ քննիչը գ/ հետաքննության մարմինը դ/ նախաքննության մարմինը
17.	Անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝	ա/ ընթերակաների և մասնագետի մասնակցությամբ բ/ ընթերակաների և դատախազի մասնակցությամբ գ/ ընթերակաների և վկայի մանակցությամբ դ/ մասնագետի և փորձագետի մասնակցությամբ
18.	Նշվածներից ո՞րը գրավոր գործարքի ձև չէ.	ա/ հասարակ գրավոր գործարք բ/ պետական գրանցման ենթակա գործարք գ/ նոտարի կողմից վավերացրած գործարք դ/ փոխանակման գործարք
19.	«Ինքնիշխանություն» եզրույթն ըստ էության նշանակում է.	ա/ անսահմանափակ իշխանություն բ/ պետական իշխանություն գ/ հանրային իշխանություն դ/ գերագույն իշխանություն
20.	Իրավական կարգավորման ո՞ր ձևն է առկա օրինակում. Պետական մարմինները գրանցում են անշարժ գույքի	ա/ իրավաստեղծ բ/ իրավակիրառ

	նկատմամբ մարդկանց սեփականության իրավունքը/տալիս են սեփականության իրավունքի վկայական։	գ/ իրավապահպան դ/ իրավապաշտպան
21.	Պետական հարկադրանքն ունի.	ա/ կամայական բնույթ բ/ հայեցողական բնույթ գ/ իրավական, որոշակի բնույթ դ/ համընդհանուր բնույթ
22.	Ըստ անհատների ակտիվության աստիճանի՝ քաղաքական գիտակցության և վարքագծի տեսակ է.	ա/ Սոցիալապես ակտիվ քաղաքական գիտակցությունը և վարքագիծը բ/ հարմարվողական քաղաքական գիտակցությունը և վարքագիծը գ/ օտարված քաղաքական գիտակցությունը և վարքագիծը դ/ Բոլոր պատասխանները ճիշտ են
23.	Ո՞րը միապետության տեսակ չէ.	ա/ դուալիստական բ/ դասային ներկայացուցչական գ/ խորհրդարանական դ/ արիստոկրատական
24.	Վերաքննիչ բողոքը կարող է բերվել՝	ա/ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ բ/ դատավորի կողմից հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ գ/ միջանկյալ դատական ակտերի դեմ (բացառիկ դեպքերում) դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
25.	Հետևյալ դադտողություններից ո՞րն է սխալ։	ա/ փաստաբանն իրականացնում է իրավական խորհրդատվություն բ/ փաստաբանը կազմում է իրավական փաստաթղթեր գ/ փաստաբանն իրականացնում է ներկայացուցչություն դատարանում դ/ փաստաբանը չի մասնակցում նախաքննությանը
26.	Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել.	ա/ վերաքննության կարգով՝ վերաքննիչ դատարաններում բ/ վճռաբեկության կարգով՝ վճռաբեկ դատարաններում գ/ Սահմանադրական դատարանում դ/ Արտակարգ դատարանում

27.	Խորհրդարանի պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել	ա/ Պատգամավորության թեկնածուները բ/ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ երրորդը գ/ Գլխավոր դատախազը դ/ Դատարանները
28.	Քաղաքացիական գործով դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝	ա/ տասնհինգ օրվա ընթացքում բ/ երեսուն օրվա ընթացքում գ/ հինգ օրվա ընթացքում դ/ մեկուկես ամիս անց
29.	Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում.	ա/ 15-օրյա ժամկետում բ/ հրապարակման պահից գ/ հրապարակման պահից մեկ ամիս հետո դ/ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը
30.	Սահմանադրական դատարանը իր որոշումները և եզրակացությունները ընդունում է.	ա/ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո բ/ հայցադիմումը ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո գ/ բողոքը ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո դ/ վճիռը ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո
31.	Պայմանագիրը, որով քաղաքացին պարտավորվել է չզբաղվել ձեռնարկատիրությամբ, իրավաբանորեն.	ա/ վավեր է բ/ անվավեր է գ/ առոչինչ է դ/ վիճահարույց է
32.	14-18 տարեկան անչափահասի՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության կնքած գործարքը, երբ նման համաձայնություն պահանջվում էր.	ա/ վիճահարույց է բ/ անվավեր է գ/ առոչինչ է դ/ վավեր է
33.	Սուեզի ջրանցքը հսկայական չափերով կրճատում է ջրային ճանապարհը.	ա/ Խաղաղ և Հնդկական օվկիանոսների նավահանգիստների միջև բ/ Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև գ/ Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև դ/ Հարավային և Ատլանտյան օվկիանոսների նավահանգիստների միջև
34.	Ինչո՞վ էր պայմանավորում Ի. Կանտը խաղաղության դարաշրջանի	ա/ կառավարման հանրապետական ձևի տարածումով

	հաստատումը	բ/ կառավարման խորհրդարանական ձևի տարածումով գ/ կառավարման միապետական ձևի տարածումով դ/ կառավարման ժողովրդավարական ձևի տարածումով
35.	Ո՞մ է պատկանում այն միտքը, որ պետությունները պետք է ընդունեն «անխախտելի միջազգային սկզբունքներ», որոնք կերաշխավորեն ռազմական հոսպիտալների և բուժանձնակազմի իրավական պաշտպանությունը.	ա/ Ժան Ժակ Ռուսո բ/ Անրի Դյունան գ/ Կարլ ֆոն Կլաուզևից դ/ Թոմաս Հոբսը
36.	ԼՂՀ-ում ե՞րբ է ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և պետական անկախություն հռչակելու հարցով անցկացվել հանրաքվե.	ա/ 1991 թ. սեպտեմբերի 21 բ/ 1991 թ. դեկտեմբերի 10 գ/ 1988 թ. փետրվարի 20 դ/ 1989 թ. դեկտեմբերի 1
37.	Տուգանքը /իրավախախտման համար/	ա/ ֆիզիկական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/ կազմակերպական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է գ/ հոգեբանական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է դ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է
38.	Ազատազրկումը /իրավախախտման համար/.	ա/ անձնական (ֆիզիական) պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/կազմակերպական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է գ/քաղաքական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է դ/գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է
39.	Աշխատանքից ազատումը.	ա/ անձնական (ֆիզիկական) պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/ կազմակերպական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է գ/ քաղաքական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է դ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է
40.	Միջին ծանրության վնաս պատճառելու համար պատասխանատվության տարիքը սկսվում է.	ա/ 14 տարեկանից բ/ 16 տարեկանից գ/ 18 տարեկանից դ/ 20 տարեկանից

41.	Մասնագիտացված դատարան չէ.	ա/զինվորականը բ/առևտրայինը գ/տնտեսականը դ/կարգապահականը
42.	Վարչական դատարանների թիվը Հայաստանում.	ա/ մեկն է բ/ երկուսն է գ/ երեքն է դ/ չորսն է
43.	Սովորույթը.	ա/ դատական նախադեպ է բ/ վարքագծի կանոն է, որը ձևավորվել է փաստական կիրառման հետևանքով գ/ ենթաօրենսդրական ակտ է դ/պաշտոնական փաստաթուղթ է,որը պարունակում է իրավունքի նորմեր
44.	Անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի նախատեսումը և կատարումը.	ա/ դիտավորություն է բ/ անզգուշություն է գ/ ինքնավստահություն է դ/ անտարբերություն է
45.	Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն.	ա/ գործին մասնակցող անձինք բ/ դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում գ/ գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործը ըստ էության լուծող ակտ դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
46.	Վճռաբեկ բողոք բերելու հիմք չէ.	ա/գործին մասնակցած անձանց նյութական իրավունքների խախտումը բ/գործին մասնակցած անձանց դատավարական իրավունքների խախտումը գ/նոր երևան եկած կամ նոր հանգամանքները դ/լրացուցիչ նյութերի ներկայացման միջնորդությունը
47.	Քրեական գործով կատարում է նախնական քննություն.	ա/ դատարանը բ/ փաստաբանը գ/ ոստիկանությունը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
48.	Մեղադրանք ներկայացնելու գործառույթ իրականացնող չէ.	ա/ տուժողը բ/ փորձագետը գ/ դատարանը դ/ ճիշտ են բ և գ պատասխանները
49.	Կտակը.	ա/ գույքի տնօրինման վերաբերյալ երկու անձանց կամքի արտահայտություն է

		բ/ գույքի տնօրինման վերաբերյալ՝ իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկության կամքի արտահայտությունն է գ/ մեկ գործունակ անձի՝ իրեն պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ կամքի արտահայտություն է դ/ ներկայացուցիչի միջոցով կատարվող գործարքի տեսակ է
50.	Փակ կտակի բովանդակությանը տեղյակ է.	ա/ նոտարը բ/ վկան գ/ կտակարարը դ/ վերը նշվածներից ոչ մեկը
51.	Երեխան.	ա/իրավունակ է բ/գործունակ է գ/գործունակ և իրավունակ է դ/ճիշտ պատասխանը բացակայում է
52.	Ըստ կտակի ժառանգներ կարող են լինել.	ա/Հայաստանի Հանրապետությունը բ/ իրավաբանական անձինք գ/ֆիզիկական անձինք դ/ բոլոր պատասխանները ճիշտ են
53.	Որդեգրում կարող են իրականացնել.	ա/ միայն երեխայի արյունակից ազգականները բ/ միայն երեխայի հետ արյունակցական առնչություն չունեցող անձիք գ/ միայն կողմնակի անձիք դ/ երեխայի արյունակցական հարազատները, ինչպես նաև կողմնակի անձիք
54.	Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե.	ա/ հարգելի պատճառով երեխային չեն կարող վերցնել ծննդատնից բ/ մեկ տարի անընդմեջ բացակայում են երկրից գ/ տառապում են քրոնիկ թմրամոլությամբ դ/ տառապում են քրոնիկ հիվանդությամբ
55.	Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա.	ա/ կիրառվում են այդ նորմերը բ/ կիրառվում են օրենքները գ/ պետությունն է որոշում որը կիրառի դ/ երկուսն էլ չեն կիրառվում
56.	Մարդու առաջին սերնդի իրավունքներն են.	ա/ հասարակական, տնտեսական և մշակույթայինը բ/ քաղաքացիականը և քաղաքականը գ/ համերաշխությանը դ/ճիշտ պատասխանը բացակայում է
57.	Ո՞ր դատաստանագրքից է մեջբերված հետևյալ միտքը. «Դատաստանի ժամանակ մի վարձեք	ա/ Համուրապիի « Դատաստանագիրք» բ/ Մ.Գոշի «Գիրք դատաստանի» գ/ Ս.Սպարապետի «Դատաստանագիրք»

	ճարտասանների և ճարտախոսների, որովհետեւ չարը նրանցով է գլուխ բարձրացնում»։	դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
58.	Հայոց պետականությունների պատմության մեջ, ե՞րբ է ընդունվել առաջին սահմանադրությունը։	ա/ 1265թ. բ/ 1184 թ. գ/ 1995 թ. դ/ 1922 թ.
59.	ՀՀ–ում արտաքին քաղաքականության կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը իրականացնում է.	ա/ Ազգային ժողովը բ/ ՀՀ նախագահը գ/ Կառավարությունը դ/ Արտաքին գործերի նախարարությունը
60.	Ինչպե՞ս է կոչվում ՀՀ նախագահի ընդունած ենթաօրենսդրական ակտը։	ա/ հրահանգ բ/ հրամանագիր գ/ որոշում դ/ ճիշտ պատասխանը բացակայում է

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:
Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր:
Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:

61.	Ի՞նչ հերթականությամբ են խմբավորվում իրավունքի նորմերը նորմատիվ իրավական ակտերում.	ա/ բաժիններ, գլուխներ, հոդվածներ բ/ գլուխներ, բաժիններ, հոդվածներ գ/ հոդվածներ, գլուխներ, բաժիններ դ/ հոդվածներ, բաժիններ, գլուխներ
62.	Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից չէ.	ա/ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ակտը դատարանի կողմից անվավեր ճանաչելը բ/ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին հակասող ակտը դատարանի կողմից չկիրառելը գ/ պատվի, արժանապատվության և գործարարի համբավի պաշտպանությունը դ/ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը
63.	Քաղաքացու իրավունակությունը.	ա/ բոլոր քաղաքացիների համար տարբեր է բ/ բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է

		հավասարապես գ/ ծագում է քաղաքացու չափահաս դառնալու հետ մեկտեղ դ/ կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա՝ դատարանի վճռով
64.	Քաղաքական դիրքորոշման տեղեկութային բաղադրատարը ենթադրում է.	ա/ համակրանք և հակակրանք ինչ-ինչ օբյեկտների նկատմամբ բ/ գործելու պատրաստակամություն գ/ իրավախախտ պետության կողմից ինչ-որ նյութական օբյեկտների նախկին վիճակի վերականգնում դ/ մարդու աշխարհայացքը և այն քաղաքական իդեալը, որին նա ձգտում է
65.	Իրավունքի նորմի այս տարրը ցույց է տալիս հանգամանքները և անձանց շրջանակը, որոնց առկայության դեպքում սուբյեկտների մոտ ծագում են իրավուքներ և պարտականություններ.	ա/ դիսպոզիցիա բ/ հիպոթեզ գ/ սանկցիա դ/ հանձնարարություն
66.	Կողմերի միջև գրավոր ձևով գործարք կնքելու համաձայնության դեպքում, եթե կողմերից մեկը գործարքի նոտարական վավերացում է պահանջում, ապա նոտարական վավերացումը	ա/ պարտադիր է, քանի որ օրենքը պահանջում է գրավոր գործարքների նոտարական վավերացումը: բ/ պարտադիր է, քանի որ այդպես է պահանջում կողմերից մեկը: գ/ պարտադիր չէ: դ/ սխալ են բոլոր պատասխանները:
67.	Նշվածներից ո՞ր տարբերակում միջազգային իրավական պատասխանատվության ձևը չի համապատասխանում օրինակին:	ա/ ռեպարացիա. օրինակ՝ իրավախախտ պետությունը նյութական վնասը հատուցում է դրամական ձևով: բ/ ռեստիտուցիա. օրինակ՝ ապօրինի վերցված գույքը բնեղենով վերադարձնելը: գ/ ռեպրեսալիա. օրինակ՝ ջրի որակի և մաքրության վերականգնում, որ կեղտոտվել էր իր մեղքով: դ/ սատիսֆակցիա. օրինակ՝ պաշտոնական ներողություն խնդրելը:
68.	Հայաստանի Անկախության	ա/ օրենքով ազդարարվել է անցում բազմակուսակցական

	հռչակագրով.	համակարգին բ/ ազդարարվել է կոմունիստական կուսակցության վերացումը գ/ հռչակվել է կուսակցությունների գործունեության ազատությունը դ/ չի նշվում կուսակցությունների մասին
69.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ.	ա/ Պետական կառավարման նույն ձևում պետական մարմինների կշիռը տարբեր կարող է լինել։ բ/ Պետական իշխանության լեգիտիմության հետևանքը ժողովրդաիշխանությունն ու օրինականությունն է։ գ/ Պետական իշխանության երեք ճյուղերի միջև իրավասության բաշխումը և դրանց փոխհարաբերության բնույթը պետաքաղաքական վարչաձևի հատկանիշներից են։ դ/ Իրավակիրառ գործունեությանը նախորդում է իրավաստեղծ գործունեությունը։
70. .	Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունք ունեն.	ա/ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ եղբայրները և քույրերը, պապը տատը, թոռները, ամուսնու ծնողները, զավակի ամուսինը։ բ/ ծնողներից մեկը, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ամուսնու ծնողները, զավակի ամուսինը, հորեղբայրները, հորաքույրերը։ գ/ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ եղբայրները և քույրերը, պապը տատը, թոռները, ամուսնու ծնողները, զավակի ամուսինը։ դ/ զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ամուսնու ծնողները, զավակի ամուսինը։

<u>Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ</u>

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև: Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:

Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ <u>չորս միավոր</u>:

71. Համապատասխանեցնել գաղափարաքաղաքական հոսանքը դրա էությանը: +2024

1. Ռասիզմ	ա/ «պրոլոտարիատի դիկտատուրայի մերժում»
2. Ազգայնականություն	բ/ «դանդաղ, աստիճանական փոփոխություններ»
3. Ժողովրդավարական սոցիալիզմ	գ/ «էթնոսի շահերը ներկայացնող ուղղություն»
4. Պահպանողականություն	դ/ «մարդաբանական հատկանիշների առաջ մղում»

1	2	3	4

72. Համապատասխանեցնել պետության ձևերը:

1. Ըստ կառուցվածքի	ա/ ժողովրդավարական և հակաժողովրդավարական
2. Ըստ վարչաձևի	բ/ միապետություն և հանրապետություն
3. Ըստ կառավարման ձևի	գ/ ազատական և սոցիալական
4. Ըստ իշխանության բնույթի	դ/ միասնական և դաշնային

1	2	3	4

73. Համապատասխանեցնել աշխատությունը հեղինակին:

1. Ժան Բոդեն	ա/ «Օրենքների ոգու մասին»
2. Հելֆորդ Մաքինդեր	բ/ «Պետությունը որպես կենսաձև»
3. Շառլ Մոնտեսքիո	գ/ «Պատմության աշխարհագրական առանցքը»
4. Յոհան Չելեն	դ. «Պատմության ուսումնասիրության դյուրին մեթոդ»

1	2	3	4

74. .Համապատասխանեցնել պետության ներքին գործառույթները խնդիրներին.

1. «Ազգի համախմբում»	ա. սոցիալական գործառույթ
2. «Անվտանգ բնական պայմանների ապահովում»	բ. կրթամշակութային գործառույթ
3. «Պետբյուջեի ձևավորում»	գ. տնտեսական գործառույթ
4. «Արժանապատիվ կյանքի պայմանների ապահո վում»	դ. բնապահպանական գործառույթ

1	2	3	4

75. Համապատասխանեցնել ավանդական ազգային կուսակցությունները դրանց ստեղծման թվին .

1. Ռամկավար–ազատական	ա.1885 թ.
2. Արմենական	բ. 1887 թ.
3. Սոցիալ–դեմոկրատական հնչակյան	գ.1890 թ.
4. Հայ հեղափոխական դաշնակցություն	դ. 1921 թ.

1	2	3	4